

ՄԵԾԱՆՈՒՆ ՎԱԽՃԱՆՆԱԼԻՔ 1879 ԱՄԻՆ

Նարայէնն Դ Կայսրոյրդի: (Տես Պրակ
Բ. էջ 150) :

Իշխան Օրանժի. — Անդրանիկ որդի
և թագաժառանգ. Հոլանտայի, որ շատ
ժամանակէ 'ի վեր Բարիզ կը բնակէր.
ուր մեռաւ 'ի հասակի 39 ամաց, 'ի 11
յունիսի, պարզ սենեկի մը մէջ, առանց
ունենալու իր քով ոչ զոք տրքունական
ընտանիքէն: Այս նորորինակ երիտա-
սարգս, բնորեւագոյն կը համարէր զԲա-
րիզ քան զՀայնա, և կրցածին չափ
քիչ անգամ կ'երթեկէր իր հայրենի-
քը: Յայտնած էր ինքնին, թէ աւելի
կ'ընտրէր Բարիզ բնակիլ՝ քան թէ Հո-
լանտայի վրայ թագաւորել. ուստի և
Հոլանտացիք շատ մեծ ցաւ մը չզգացին
այնպիսի իշխանի մը մահուան վրայ:

Հ. Պարտեւոնոյ. — Երեւելի քարոզիչ
միլանեցի:

Իշխան Աղեքսանդր Պարիսիցիսը.
— Բոլս զօրավար, որ երկար ժամանակ
բանակի հրամանատար եղաւ 'ի Կով-
կաս. յաղթեց Շամիլի 1859ին, և ամ-
բողջ Կովկասու գաւառն ընկճեց: Մե-
ռաւ մարտի 9ին 'ի Ճինեռա, 'ի հասակի
65 ամաց:

Եսկոյր Տէ Մարդիկոյ. — Երեսփոխան
խտալական խորհրդարանին և ընդհա-
նուր վարիչ երկաթուղեաց Հոռովմայ
գաւառին, և երբեմն պաշտօնեայ պուր-
պոնեան: Ինձած էր 'ի Թունուզ, և ե-
րիտասարդ հասակէն սկսեալ՝ դիւանա-
դիտութեան հետամուտ ըլլալով՝ եր-
կուց Սիիլիւսայց ներկայացուցիչ եղաւ
'ի Հոռովմ և 'ի Լոնտրա: Յամին 1860 Բ
Փրանկիսկոփ առժամանակեայ պաշ-
տօնարանին մասնակից եղաւ, և յետ
ազատութեան Խալիլոյ՝ երեսփոխան
նոյն տէրութեան: Մեռաւ 'ի 5 ապրիլի:

Քրիստիանէ Օռլէանոս. — Դուստր Մոն-
բանսէլի դքսին. մեռաւ 'ի Սեիլեա
27 տարուան, նոյն հիւանդութեամբ՝ ո-
րով մեռեր էր անցեալ տարի իր քոյրն

ալ Մարիամ Տէ Լաս Մերչէտէս՝ Սպա-
նիոյ թագուհին:

Մարիամ Պոնաքարդէ Բադրուրն. —
Առաջին ամուսին եղբօր Մեծին Նարո-
լէնի Հերոնիմոսի արքային վեսոգֆա-
լիոյ: Մեռաւ 'ի 4 ապր. 94 տարեկան:
Եպամիլոնդ Տէլիձիորձիս. — Նա-
խարար ելումարից 'ի Յունաստան: Մե-
ռաւ յԱթէնս 50 տարեկան:

Մուշիք Տէրվիշ Բաշա. — Օսմանեան
տէրութեան քաջագոյն զօրավարներէն
մէկն էր: Վերջին պատերազմին մէջ
զլիւսաւոր հրամանատար էր չորրորդ
բանակին, Պաթուկի գաւառը պաշտ-
պանելու պաշտօնի: Միակ թուրք զօ-
րապետն եղաւ՝ որ միշտ զլիւսաւ մղեց,
մեծ կորուստներ պատճառելով իրենց:
Մեռաւ յանկարծամահ յ18 յունուա-
րի, իր քոնաքին մէջ 'ի վոսփօր:

Տօն Պալտօմէրոյ Էսքարթիոյ. — Զօ-
րապետ սպանիացի, որ իրեն հանձա-
րովն և հայրենասիրութեամբ՝ հասա-
րակ վիճակէ կոչուեցաւ դուքս վիկտօ-
րիայի՝ իշխան վերկարայի: Պատերազ-
մեցաւ Մեծին Նարդէնի արշաւանաց
դէմ, Բիդապէլլայի պզտիկութեան ժա-
մանակ խնամակալ եղաւ: Ի վերջ 1866ի
բոլորովին զինուորական կեանքէ քա-
չուեցաւ. և մեռաւ տարւոյս յունուարի
3ին, ութսունութիւն տարեկան:

Յովսէփիմ Հէկը. — Նախագահ հելուե-
տական դաշնակցութե 1876էն ց1878:
Նշանաւոր օրէնսդէտ մ'էր, պատմա-
կան և իրաւագիտական շատ մը գոր-
ծոց մատենագիր: Մեռաւ 'ի Բլարիս
յիսուն և չորեքամեայ, 'ի 1 մարտի:

Մարգիզն Մաքսիմուս Մոնդէճէմու-
լոյ. — Խաւացի երեւելի քաղաքագէտ,
ազնուազդի, որ իր ազատ գաղափա-
րաց համար ստիպուելով խալիլայէն
հեռանալ յամին 1831, նախ 'ի Գաղղիա
անցաւ, անտի 'ի Պելճիա, ուր պատե-
րազմեցաւ նոյն երկրին անկախութեան

համար : Այն տեղէն անդաւ 'ի Բորդու-
գալ, պատերազմելու ընդդէմ Տօն Մի-
կուէլի : Հայրենեաց ազատութենէն
վերջը, ինքն ալ դարձաւ և զանազան
անդամ սինկլիսիկոս և երեսփոխան
ընտրուեցաւ : և մեռաւ 'ի Հոռլմ' ա-
պրիլի 5ին, 72 տարեկան :

Յովնաթան Բիլ - Սնդղիացի զօ-
րավար. և երբեմն պատերազմի պաշտօ-
նեայ . եղբայր մեծանուն Ռոպերդի :
Մեռաւ 'ի Լոնտրա փետրուարի 13ին,
80 տարեկան :

Յովսէփ Բիզանէլի . - Երեւելի հայ-
րենասէր, և զանազան ժամանակ երես-
փոխան իտալիոյ խորհրդարանին :

Մարաջախտ և Կումսն Ռոն . - Ե-
րեւելի զօրապետ և բարեկարգիչ բրու-
սիական բանակին, որուն զուլի էր
1850էն 'ի վեր . իրեն որդեապիւքն յա-
ջողեցան 1866ի և 1870-71ի պատե-
րազմներն : Մարաջախտի պատուանու-
նը վերջին փրանկ-բրուսիական պա-
տերազմէն վերջը ստացաւ : Ռազմագի-
տութենէն զատ՝ նշանաւոր է նաև իր
հետեւեալ գրուածներովն . Սկզբունք
աշխարհագրութեան, ազգաբանու-
քեան և քաղաքագիտութեան . Զի-
նոռութեան աշխարհագրութեան Եւ-
րոպայի, և Սպանիական բերանկողի
ըստ զինոռութեան տեսութեան : Մե-
ռաւ 'ի Պերլին 76 տարուան, 'ի 23
փետրուարի :

Ինվակալ Սեւե . - Փաջ զօրավար
գաղղիացի, որ Բարիզու վերջին պաշար-
ման և Հասարակութեան ժամանակ շատ
ճակատամարտներու մասնակից եղաւ .
մինչև իրեն յանձնուեցաւ առ ժամանա-
կեայ հրամանատարութիւնն ընդդէմ
խռովարարաց : Մեռաւ 'ի Բարիզ 69
տարուան, 'ի 25 մայիսի :

Յովհաննէս Սղաւմէքի . - Զուիցե-
րացի փաստաբան, որ շատ անգամ
զուլիս եղաւ Դանակցութեան, և
1873ին Ալապոմայի նշանաւոր խն-
դրոյ մէջ դատաւորաց մէկն : Մեռաւ
'ի Պեռնա 59 տարեկան :

Վան Պոստ . - Հոլանտացի նախարար
գաղթականութեանց, երեւելի քաղա-

քաղէտ և տնտեսաբան : Վերջին երե-
սուն ամաց մէջ՝ Ստորին Նահանգաց ա-
մեն քաղաքական պատահարաց մաս-
նակից եղաւ : Մեռաւ 'ի Հայեա, փե-
տրուարի 21ին, եօթանասնամեայ :

Գոռլիքմուս Վիլլիսէ . - Բրուսիացի
զօրավար, որ 1849ին Շելզվիլի Հոլշտայ-
նի բանակին հրամանատարն եղաւ ընդ-
դէմ Դանեաց, և շատ նշանաւոր էր ի-
բրեւ զինուորական գրիչ : Մեռաւ 'ի
Տէսսաւ 89 տարեկան, 'ի 25 փետր :

Բենիամին Ռիդմ . - Բարուն երրա-
յեցի, և զուլիս սինակիսիային 'ի Լոն-
տրա . քաջ քաղաքիչ էր իր կրօնից, և
լեզուագէտ : Մեռաւ 43 տարուան, 'ի 1
յունուարի :

Գուսպիւրուս Պաշտաքիլի . - Իտալա-
ցի մատենագիր, բանաստեղծ և սինկլի-
սիկոս : Թարգմանեց յոյն և անգղիացի
բանաստեղծներ, և յօրինեց ինքնագիր
քնարերգութիւններ : Թամին 1848 ե-
րեսփոխան եղաւ Նէապոլիոյ խորհր-
դարանին, և 1860էն վերջը իտալական
սինկլիսիկոս և երեսփոխան : Մեռաւ
'ի 14 մարտի, 79ամեայ, 'ի Նէապոլիս :

Հռիքարտոս Հեկիլիկոս Տանու . -
Նեստորն բանաստեղծից և մատենա-
գրաց Ամերիկոյ : Թամին 1814 քանի մը
բարեկամաց հետ հաստատուր էր առա-
ջին նշանաւոր թերթը Նոր Ալիսարէքին
մէջ, որ է Հիւսիս . Ամերիկայան Հան-
դիսարան : Մեռաւ 'ի Գէմպրի, մերձ
'ի Պոստըն 91 տարեկան, փետր . 2ին :

Կարոյուս Վոլդեր . - Պեռլիացի
նշանաւոր մատենագիր, ուսուցիչ գաղ-
ղիական մատենագրութեան Պեռլիոյ
մայրաքաղաքին զինուորական դպրոցին
մէջ : Մեռաւ մայիսի 7ին :

Պետրոս Ֆանֆանի . - Իտալացի երեւ-
ելի մատենագիր, որուն երկասիրութիւն-
քը գրեթէ 170ի չափ են : Մեռաւ 'ի Ֆիո-
րենցա 64 տարեկան, մարտի 4ին :

Կիլիկեկիլոյ . - Երեւելի աստուածա-
բան իտալացի, հմուտ զանազան ա-
րեւելեան լեզուաց . իր գրուածոց մէկն
ալ է հերթումն՝ Վարք Յիսառի գրոց
Ռենանի : Վախճանեցաւ 'ի Դուրին :

Անտոն Բանիցցի . - Նշանաւոր գրա-

գէտ իտալացի . երիտասարդութեան ժամանակ իր հայրենասիրական գաղափարացն համար ստիպուեցաւ թողլու ծննդեան երկիրը . և զանազան տեղ լիափառելէ վերջը՝ ՚ի Լիվորուօ հաստաւ տուեցաւ իրբն ուսուցիչ իտալերէն լեզուի . և երբ 1828ին Լոնտրայի համալսարանն բացուեցաւ, այն տեղ իտալական դրականութեան դասատու եղաւ, և քիչ վերջը բրիտանական թանգարանին գրատան վերատեսուչ, զոր իր արդեամբը 1 միլիոն դրեամբք ճոխացուց. ծերութեան ժամանակ կուրանալով պաշտօնէ հրաժարեցաւ. և մեռաւ ութսնամեայ ՚ի Լոնտրա՝ ապրիլի 9ին :

Սիրվէադր Տը Սասի. — Գաղղիացի քաջ քննադատ . Բասնուեօթը տարեկան Տէպա լրագրին գրիչներէն եղաւ, ուրան քսան տարուէն աւելի քաղաքագիտական յօդուածներ մատակարարեց . և յետոյ Մազարինեան մատենադարանին վարիչ գրուեցաւ : Դեկտեմբերի 2ին պետական հարուածէն ետքը Տը Սասի՝ որ սաստիկ Օռլէանուտան յարեալ էր, քաղաքագիտութենէ հրաժարեցաւ, և ընտիր ախորժակով և քննադատութեամբ յօդուածներ կուտար Տէպային : Մեռաւ 78 տարեկան ՚ի Բարիզ, փետրուարի 14ին :

Սէն-Ռընէ Դէյլանտիէ. — Գաղղիացի անուանի մատենագիր . մեռեալ յանկարծական, 62 տարուան, փետր. 27ին :

Աքիլէս Տը Վօլապէլ. — Գաղղիացի պատմագիր . անուանի է իր Պուրպուրէնան յեղափոխութեան Պատմութիւնն : Մեռաւ ութսնամեայ ՚ի Նիցյա : Թամին 1848 հասարակաց կրթութեան նախարար եղաւ . բայց քիչ վերջը առանձնական կեանք ընտրեց :

Հիպպոլիտոս Տը Վիլմըսս. — Հիմնադիր Բարիզու Ֆիկլարօ անուանի լրագրին . մեռաւ 66 տարեկան, մերձ ՚ի Նիցյա, ապրիլի 11ին :

Անտոն Պէրդի. — վենետկեցի անուանի բժիշկ և մատենագիր : իտալական և օտարագրի շատ ուսումնական ընկերութեանց անդամ էր, և ամենկրիտիկոս տէրութեան : Մեռաւ ՚ի 24 մար-

տի յանկարծական ՚ի վենետիկ՝ Ժողովոյ ակըմբի մը մէջ, մինչդեռ ոգւով կը ճառախօսէր օգտակար խնդրոյ մը վրայ :

Գուշիերուս Հենրիկոս Տոմէ. — Գրուի և հիմնադիր մետէորաբանութեան ՚ի Իերմանիա . ուսուցիչ ՚ի համալսարանին Պերլինու, ուր մեռաւ 86 տարեկան, ապրիլի 4ին, զանազան յարգի գրուածներ թողլով իր գիտութեան վրայ :

Կոմսուռի Ֆիորինի-Մացցանդի. — իտալացի կին բնապատում, որ օգտակար երկասիրութիւններ ալ բրած ունի, մասնաւորապէս բուսաբանութեան վրայ, և անդամ էր Եւրոպայի զանազան ուսումնական բնկերութեանց : Մեռաւ ութսնամեայ, ապրիլի 24ին, ՚ի Հոլմի :

Բէձ. — Անգղիացի երկրաբան, ուսուցիչ ՚ի համալսարանին Տուրհամի : Մեռաւ 65 տարեկան, թողլով զանազան հետաքրքրական գրուածներ :

Հ. Յովսէփ Ռումանյ. — Սիկիլիացի Բիսուպեան կրօնաւոր . աստուածաբանութեան, իմաստասիրութեան և միանգամայն գրամադիտութեան վրայ օգտակար գրուածներ բրած է : Ի 1860 Բիսուպեանց պարտուելով իտալիայէն, ինքն ալ Սպանիա գնաց, ուր աստուածաբանութեան ուսուցիչ եղաւ Սալա մանիքայի հռչակաւոր ուսումնարանին մէջ, Թամին 1865 իր կրօնակցաց կամօքը հիմնեց ՚ի Կոստանդնուպօլիս Բիսուպեանց իտալական վարժարանը, ուր մեռաւ մարտի 27ին, 68 տարեկան :

Ալքսիս Դարտիէ. — Գաղղիացի անուանի մատենագիր և բժիշկ, մեռեալ յիսնամեայ, ՚ի 11 յունուարի :

Ե. Մ. Թոգէլլի. — իտալացի չափաբան : Ի 1848 վենետիկոյ Հասարակապիտութեան ատեն զօրավար եղաւ շինուածոց, և վերջը Բարիզ հաստատուելով ուսուցիչ եղաւ չափաբերութեան, և զանազան ուսումնական գործիններ հրնարեց . ուր և մեռաւ մարտի 4ին :

Պօդոս Վոլքիէլլի. — Հոլմիացի երկեղի չափաբան և բնագէտ . շատ ա-

կաղեմիաներու անդամ և բազմաթիւ օտարազգի ուսումնականաց բարեկամ էր, և զանազան չքանչաններով պատուեալ: Մեռաւ իր ծննդեան քաղաքը 76 տարուան՝ ապրիլի 16ին:

Թովմաս Գուդիւր. — Գաղղիացի հռչակաւոր պատկերահան, մեռեալ 'ի Բարիդ մարտի 30ին:

Յուլիոս Մէն. — Գաղղիացի մատենագիր, մեռեալ 67 տարուան:

Կեսար Մուսիկի. — Ֆէորենցացի պատկերահան և երաժիշտ: Մեծ պատիւ ունեցաւ նաև Գերմանիոյ և Ռուսիոյ մէջ, ուր երկար ժամանակ բնակեցաւ:

Յովն. Բաւտիստի. — Միլանցի երկեկի արձանագործ, հետևող ֆանտազի: Մեռաւ եօթանասնամեայ 'ի 25 մարտի:

Ալզուստոս Բրեյ. — Գաղղիացի նշանաւոր արձանագործ, մեռեալ 'ի Բարիդ, մարտի 12ին՝ եօթանասնամեայ: Կորբուստոս Սէմբեր. — Գերմանացի աշուանի ճարտարապետ, մեռեալ 'ի Հոտմմ եօթանասունհինգ տարեկան, 'ի 15 մայիսի:

Անտոն Գանդարտիկի. — Միլանցի հռչակաւոր արձանագործ, որուն շատ արձաններն զտրդ են իշխանազանց և թագաւորաց պալատներուն, իտալիայէն դատ 'ի Գերմանիա, յԱստրիա, յԵգիպտոս: Փիլադելփիոյ աշխարհահանդիսին մէջ դատաւորաց մէկն էր. զանազան ասպետութեանց չքանչաններ ընդունեցաւ: Դժբաղդաբար մահն փողահատ յափշտակեց զինքը յիսնամեայ հասակին մէջ՝ մարտի 7ին, թողլով վաթսուէն աւելի ընաիր աշխատութիւններ:

Էդուարդ Մատթէոս Ուօրտ. — Անգղիացի մեծանուն պատկերահան, մեռեալ 'ի հասակի 62 ամաց:

Կանոնիկոս Կարոլոս Ճիրոնտէլլի. — Անուանի եկեղեցական մատենագիր, 'ի Գերմանա քաղաքէ իտալիոյ:

Յովսէմէն Վաքրա. — իտալացի ծովակալ. յամին 1866 լիսսայի նաւական պատերազմին մէջ երկրորդ հրա-

մանատարն էր. և փստահ էր իր կողմանէ յաղթութիւնը ձեռք բերելու, եթէ զիւաւորն անպատճառ տեղ նահանջի նշան ընել տուած չլըլար: Մեռաւ 'ի Նեպոլիս, յուլիսի 2ին:

Մարգիլեմ Լուդովիկոս Բալլապիլի. — իտալացի սինկղիտիկոս, ամենահին ազգատոհմէ, որուն կը վերաբերէր անուանի կարդինալն Սֆորցա Բալլապիլինոյ, գրիչ Պատմութեան Տրիտենդեան ժողովոյ: Սա ալ շատ բանատեղծութիւններ շարագրած է թէ եկեղեցական և թէ Սուրբ Գրոց վրայ. շատ բարեկամ էր նաև Անտոն Ռոզմի. նիի: Մեռաւ 'ի Դուրին 74 տարեկան, յուլիսի 8ին:

Յուկոթ Տիւնս. — իտալացի երեսփոխան, առաջնորդ Օթիմոնէ լրագրին. մեռեալ 56 տարեկան, յուլիսի 16ին:

Հեմրիկոս Սմարդ. — Անգղիացի աշուանի երգահան, մասնաւորապէս եկեղեցական երգոց. մեռնելէն քիչ առաջ՝ թագուհին իրեն թոշակ կապեր էր: Մեռաւ 'ի Լոնտրա 66 տարեկան, յուլիսի 16ին:

Կոնրադոս Մարդիկ. — Նորադանդեպիսկոպոս բրուսիացի: Քիչ անձինք եղած են իրեն պէս սեմական լեզուաց քաջ տեղեակ: Մեռաւ յուլիսի 16ին, 67 տարեկան:

Ամէտէ Մալմէն. — Գաղղիացի աշուանի ճարտարապետ, զուի նաւական շինուածոց 'ի Գաղղիա. նոր տեսակ պոտտակ մը շինած ունի չոգեանաւոց համար: Մեռաւ 64 տարուան 'ի չափազանց աշխատութենէ:

Քիդ Ճօնսդըն. — Անգղիացի երկեկի աշխարհագիր և ճանապարհորդ, մեռեալ յունիսի 23ին ուրիշ ուսումնականաց պէս թանջիւ 'ի Պերսպէրոյ, մերձ 'ի Գանդիպար, ուր ընկերութեամբ գնացած էր Նիաստա լիճը զննելու համար: Արիստոտէլ վալսօրիիս. — Յոյն ազգային հռչակաւոր բանաստեղծ:

Լուդովիկոս Վուլլիմէն. — Զուիցեացի պատմագիր, մեռեալ 'ի Լոզան 83 տարուան:

Մարքիս. — Անգղիացի անուանի առ-

տեղաբաշխ, անդամ արքունի ընկերութեան. շատ կրկնաստղներ և միգամածներ գտաւ, զորոնք ուրիշներն չէին տեսած:

Սիր Ճօն Ռօուլէնտ Հիլ. — Անգղիացի ուսումնական, բարեկարգի թղթաբերութեան. ինքն՝ յամին 1838 առաջ արկեց Անգղիոյ նամակաց վրայ թղթադրոյմը (Timbre poste), որ ընդունելի անցաւ, և կամաց կամաց բոլոր աշխարհք տարածուեցաւ. և 'ի վարձ ընդունեցաւ Տէրութենէն ամբողջ երկրին թղթաբերութեան վարուածինը, 500,000 ֆրանք, և այլ 50,000 տարեկան թոշակ, և բաղանեաց կարգին չքանչանք: Մեռաւ 84 տարուան:

Վիօլէ-Լը-Տիէք. — Գաղղիացի մեծ, անուն ճարտարապետ և հնագէտ. մեռեալ 'ի Լոզան 65 տարեկան, թողլով շատ օգտակար գրութեանք:

Հենրիկոս Գէրէյ. — Ամերիկացի արնտեսագէտ. (Տես Պրակ Գ, էջ 286):

Մեծհաւնորդէ. — Նախարար հասարակաշինութեանց խտարիոյ և սինկլիտիկոս, մեռեալ 68 տարեկան 'ի Հոլմ, հոկտեմբերի 12ին:

Բեռնարդոս Հենրիկոս Պոչոլ, — Արքունի քարտուղար արտաքին գործոց Գերմանիոյ կայսրութեան: Մեռաւ 'ի Ֆռանքֆորդ, 'ի 20 հոկտեմբ:

Լուդովիկոս Պէլմունդէ. — Գաղղիացի Նաբոլէոնեան բանաստեղծ. մեռեալ 82 տարեկան 'ի Սէն Գլու, 'ի 14 հոկտեմբերի:

Իշխանուհի Մարիամ Աննա Գարուշիւս Պոնաքարդէ. — Այրի Անտոնի, վերջընթեր որդւոյն Լուկիանոսի: Մեռաւ 'ի Հոլմ 56 տարեկան, հոկտեմբերի 9ին:

Պետրոս Սաւֆիլիքոյ. — Կանոնիկոս Բալերմոյի մայր եկեղեցւոյն. արդարակորով և ընտիր պատմագիր:

Լուդովիկոս Ռէյսոյ. — Գաղղիացի կայսառ գրիչ, բանաստեղծ և պատմագիր. հրատարակած է նաև Ռոյիշտէ տէյ Մօնտ պարբերական Հանդիսին մէջ Տնտեսագիտութեան վրայ ընտիր յօդուածներ, որոնց համար Մոն-

դիոնի վարձուց արժանացաւ: Մեռաւ 80ամեայ 'ի Բարիզ, հոկտեմբ. 31ին, Էսնէսի Կոք. — Նէպոլեոնի ժողովրդակոն երգահան, մեռեալ 67 տարուան, նոյեմբերի 1ին:

Ապոնտիոյ Սաւմիորմիոյ. — Հռչակաւոր արձանագործ միլանցի, հիւսան մը որդի. մինչև ցքսանեութ տարուան հասակը՝ արուեստին սիրովն անխոնջ աշխատեցաւ, մինչև յետոյ աշխարհահանգիւսից մէջ ոսկի միտալնեւոր արժանի եղաւ: Մեռաւ ութսուն և միամեայ 'ի Միլան, նոյեմբերի 2ին:

Վալէնդէն. — Գաղղիացի սինկլիտիկոս, անուանի հրամանատարն և պաշտպանողն Սգրադպուրկի յամին 1870: Մեռաւ անձնասպան 42 տարեկան:

Միքիս Սոլովիէք. — Անուանի Ռուս պատմագիր. իրեն զխաւոր զործն է Պատմութիւն Ռուսիոյ՝ 30 հատոր: Մեռաւ 'ի Մոսքուա հոկտեմբերի 4ին: Խսիդորոս Լա Լուսիւս. — Սիկիլիացի պատմագիր. մեռեալ 56 տարեկան 'ի Բալերմոյ, օգոստոսի 28ին:

Յակոբ Գլէք Մաքսիլէ. — Անգղիացի հռչակաւոր բնագէտ. ուսուցիչ 'ի համալսարանին Քէմպրիճի, ուր մեռաւ 'ի 5 նոյեմբերի 74 տարուան: Իրեն զլուս գործոցն է՝ երկտրութեան և մաքնիսականութեան վրայ գրածն:

Ալէն Պրօուս. — Անգղիացի նշանաւոր աստեղագաշխ: 30 տարի առաջ գնաց 'ի Հնդկաստան, տեղացի իշխանի մը օգնութեամբ դիտարան մը կանգնելու ծովուն երեսէն 2,000 մէդր բարձր. ուսիկց յետոյ շատ օգտակար դիտողութիւններ բրաւ: Մեռաւ 63 տարեկան 'ի Լոնտոն:

Լուդովիկոս Պետրոս Քալմանսարի. — Անգղիացի գնդապետ, ծնեալ 'ի Քորսիքա, իտալացի հօրմէ: Գլխաւորապէս այս անձն էր՝ որ անցեալ ամառ այնքան յաջողութեամբ Աֆղանստանի պատերազմը Անգղիոյ պատուովը լընցուցեր էր, և ինքնին իր Տէրութեան կողմանէ ներկայացուցիչ պիտի ըլլար այն տեղ, երբ սեպտեմբերի 4ին տեղացւոց յանկարծական ապստամբու-

թեան մը զոհ եղաւ հանդերձ 80 ընկե-
րակցօք :

Միքայել Շըվալիէ . — Գաղղիացի է-
րևելի տնտեսադէտ , զանազան ժամա-
նակ երեսփոխան և անդամ աշխար-
հահանդիսից յանձնաժողովոց : Մեռաւ
73 տարեկան 'ի 28 նոյեմբերի :

Պետրոս Բառնիզէպի . — Իտալացի
աստեղաբայիս կանոնիկոս 'ի կլերանո-
ցին Աղեքսանդրիոյ Բիէմոնդի , յորում
ինքնին կանգնել տուեր էր մէտէորա-
բանութեան դիտարան մը . իրեն յա-
տուկ ճիւղն էր ասուպնեբու գիտու-
թիւնը , որուն վրայ օգտակար գրուած
ներ ըրած է . նշանաւոր է դարձեալ ի-

րեն ձողմաւալի գործին : Մեռաւ 56
տարեկան , դեկտեմբերի 16ին :

Յովսէփ Ալէքցանա . — Իտալացի նը-
շանաւոր զօրավար : Տասնութեց տարե-
կան՝ Մեծին Նաբոլէոնի բանակին մէջ
մտաւ ընդդէմ դաշնակցաց , և մինչև
ց1866 գրեթէ իտալիոյ ամենայն պա-
տերազմաց մասնակից եղաւ : Մեռաւ
իննսնամեայ 'ի Հռովմ , դեկտեմբ . 25ին :

Յովնաննէս Դաւթեան լազարէլ . —
Մին 'ի հայազգի քաջ զօրավարաց՝
Ռուսիոյ ծառայութեան մէջ , որ վերջին
պատերազմիս ժամանակ մեծ օգնու-
թիւն ըրաւ իր Տէրութեան Ասիոյ կող-
մը : Մեռաւ յօգոստոսի :

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ՊԱՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԱՅ ԵՒ ՅՈՒՆԱՅ

Այս նոր հրատարակեալ դասական
պատմութեանս առաւելութիւնն առհնովք՝
իր քննադատական ողջ ոգին և էականն
համառօտեմն է , զոր իմանալու համար մի
անգամ միայն կարդալն բաւական է : —
Այս գոյնն աշխատութեան առաջնորդ և
ուղղիչն է Ալեքեան պատմաբան մասին
մէջ Փ . Շմիթ երևելի անգղիացի պատմա-
գէտն և Գուլիէլմոս Ռից գերմանացի . իսկ
Յունաց պատմութիւնը Ք . Սանէզի իտալա-
ցւոյն Յունաց պատմութեան համառօտն
է : Ի դիւրութիւն վարժապետաց և աշա-
կերտաց միանգամայն իւրաքանչիւր ազգին
պատմութեան վերջը՝ ժամանակագրու-
թիւնն աւելցուցինք , որ թէ և շատ տեղ
գեթ արդի քննադատական պատմութեան
չի համապատասխանէ , բայց ինչպէս եր-
բմն՝ հիմայ ալ նոյնպէս օտարաձայն չէ :

Երջանիկ և երանիկ կը համարինք
զմեզ՝ իթէ մեր մտաց տեսութեամբ և այս

գոյնն տարրական աշխատութեամբ մենք
ալ կարենանք ձեռնտու սեպուիլ ազգային
վարժապետաց . և յորդորել զոմանս՝ մա-
նաւնդ թէ զրազումն իսկ համազգի ու-
սումնասէր մանկանց և պատանեաց , թա-
փանցել աւելի ոյն աշխարհաց հին պատ-
մութեան խորը , որոնք եղան երբմն
մարդկութեան և քաղաքականութեան ու-
րորոց և խանձարուր : Մեր կողմանէ քա-
նացինք գոնէ ըստ կարելոյն այնպիսի դա-
տական հին պատմութիւն մը հրատարակել
որ զպատմական ստոյգ դէպս արդի նորանոր
ժանօթութեամբ և քննադատութեամբ ներ-
կայացընէ :

Պատմագէտ վարժապետաց ուղիղ
տեսութիւնը , անաշառ վարկն և ներդա-
միտ դատաստանն և սիրով ընդունելու-
թիւնը կը յուսանք թէ պիտի սրտասլոյզ
զմեզ աւելի մեծագունին ձեռք զարնելու :

ՌԱՂԱՅԻՒԹ . — Այս Պրակիս՝ Կոստանդնուպոլիս , Էփեսոյ Տէ Ամէն Իտալացի հաստատմոյն գլուխ
(էջ 389) , պէտք է կարդալ ԱՅՏՊՈՒՄ վերագրին :

Նաև նախընթաց Պրակին մէջ (Գ . էջ 260 , յառաջին սեան , տող 24) Աբուլէյ բաւը , Աբուրէյ
փոխելու է :